ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ – 1

Կովի կամ ոչխարի սրտի հերձում

Աշխատանքի նպատակը

Աշխատանքի նպատակն է աշակերտներին ծանոթացնել կովի կամ ոչխարի սրտի կառուցվածքին:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ.
կովի կամ ոչխարի սիրտ, ունելի և նշտար:

Աշխատանքի ընթացքը

Սրտի անատոմիական կառուցվածքի ուսումնասիրության նպատակով կատարել կովի կամ ոչխարի սրտի հերձում:Ցույց տալ, որ սիրտը գտնվում է սրտապարկում, որը շարակցահյուսվածքային թաղանթ է: Այդ թաղանթը հեռացնելուց հետո երկայնական կտրվածքով սիրտը բաժանել աջ և ձախ կեսերի, որոնք միջնապատով բաժանված են միմյացից: Ցույց տալ, որ աջ ուձախ կողմերը կազմված են երկու մասից՝ նախասրտից և փորոքից: Հատուկ ուշադրություն դարձնել նախասրտերի և փորոքների միջև գտնվող փեղկավոր փականներին: Աջ նախասրտի և փորոքի միջև գտնվում են եռափեղկ փականները, իսկ ձախ նախասրտի և ձախ փորոքի միջև գտնվում են երկփեղկ փականները:

Արդյունքների գրանցում և վերլուծություն

.....

Եզրակացություն

.....